ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 03.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/02

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.05.2017թ. թիվ 03/73-3/7693-17 գրությամբ «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 21.04.2017թ. թիվ 4/445 գրության հիման վրա, 03.05.2017թ. թիվ 03/73-3/7693-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

Պատվիրատուն 21.04.2017թ. թիվ 4/445 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից 29.03.2017թ. «ՀՀ ԿԱ ՈԶ ՇՀԱՊՁԲ-17/10/ԱԲ/1/ԻԾ» ծածկագրով հայտարարված մրցույթում 1-ին և 2-րդ տեղերը զբաղեցրած

մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման կարգի 47-րդ կետի 1-ին մասի համաձայն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցած ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության մասին 12.04.2017թ. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից կատարվել է հարցում: Նույն որոշման 48-րդ կետի համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից 14.04.2017թ.-ին ստացված եզրակացության արդյունքում պարզվել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցում է ակտիվների հաշվեկշռային արժեքը:»:

Բողոքի քննության ընթացքում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Պատվիրատուի ներկայացուցիչ՝ ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի գնումների բաժանմունքի պետ՝ Արսեն Մնացականյանը:

3. <u>«Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 10.05.2017թ. գրությամբ դիմել է Խորհրդին՝ հայտնելով հետևյալը.

««Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարության gnumner.am էլեկտրոնային կայքում հրապարակված հայտարարություններից տեղեկացել է, որ ՀՀ բողոքարկման խորհրդում քննության է առնվում ՍՑ-ԷՍ-2017/02 ծածկագով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը (Պատվիրատու՝ ՀՀ ԿԱ ոստիկանության զորքեր, գնման ընթացակարգի ծածկագիր՝ ՀՀ ԿԱ ՈԶ ՇՀԱՊՁԲ-17/10/ԱԲ/1/ԻԾ):

«Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն տեղեկացնում է, որ 02.05.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրել է բողոք, որում բողոքարկվել է նաև ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից կազմակերպված ՀՀ ԿԱ ՈԶ ՇՀԱՊՁԲ-17/10/ԱԲ/1/ԻԾ մրցույթը, այդ թվում նաև վերոհիշյալ մրցույթի շրջանակներում «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 122.2 կետի համաձայն՝ եթե գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու գործընթացի շրջանակներում մասնակցի կողմից Գնումների բողոքարկման խորհուրդ է ներկայացվում բողոք, ապա գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու հիմքերի ուսումնասիրման գործընթացը կասեցվում է՝ մինչև Գնումների բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշման ընդունումը:»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 122.2 կետով՝ «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն խնդրել է կասեցնել ՍՑ-ԷՍ-2017/02 ծածկագրով պաշտոնական ընթացակարգի շրջանակներում «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերի ուսումնասիրման գործընթացը՝ մինչև Գնումների բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշման ընդունումը:

Ընկերությունը 19.05.2017թ. թիվ 21658-17 գրությամբ Խորհրդին հայտնել է հետևյալը.

««Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած 02.05.2017թ. բողոքը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԱՄ-2017/01 որոշմամբ բավարարվել է ամբողջությամբ՝ դադարեցվել է ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից կազմակերպված ՀՀ ԿԱ ՈԶ ՇՀԱՊՁԲ-17/10/ԱԲ/1/ԻԾ ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը, քանի որ համաձայն՝ «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի 2016թ. շահութահարկի տարեկան հաշվարկի (ինչը հաստատված է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կողմից) և ՀՀ ԿԱ պետական եկամուտների 27.04.2017թ. թիվ 1/6-1/14168-17 գրության, ակնհայտ է, որ «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի 2016թ. ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 279.590.904 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է 254.995.809 ՀՀ դրամ:»:

Ընկերությունը նշել է, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԱՄ-2017/01 որոշմամբ արձանագրվել է, որ «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի «ֆինանսական միջոցներ» չափանիշը բավարարում է հրավերի պահանջներին և Ընկերության հայտը այդ հիմքով ենթակա չէ մերժման, ուստի և Խորհուրդը գտել է, որ Ընկերության բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասը, որի համաձայն՝ Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:»:

Ընկերությունը հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության բողոքը բավարարվել է և վերացվել է ՀՀ ԿԱ ՈՀ ՇՀԱՊՁԲ-17/10/ԱԲ/1/ԻԾ մրցույթի շրջանակներում «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքը, Խորհրդին խնդրել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ՍՑ-ԷՍ-2017/02 ծածկագրրով նախաձեռնած պաշտոնական ընթացակարգը մերժել:

4. ՍՑ-ԷՍ-2017/02 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուդը ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 03.05.2017թ. թիվ 03/73-3/7693-17 գրությունը, ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի 21.04.2017թ. թիվ 4/445 գրությունը, ՀՀ ԿԱ ՈՀ ՇՀԱՊՁԲ-17/10/ԱԲ/1/ԻԾ ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 14.04.2017թ. տրված եզրակացությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 27.04.2017թ. թիվ 1/6-1/14168-17 գրությունը, N ՀՀ ԿԱ ՈՀ ՇՀԱՊՁԲ-17/10/ԱԲ/1/ԻԾ ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.04.2017թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը, Ընկերության կողմից Խորհրդին ներկայացրած 10.05.2017թ. և 19.05.2017թ. գրությունները, Ընկերության կողմից 02.05.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքը, ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 16.05.2017 թվականին կայացրած թիվ ԱՄ-2017/01 որոշումը.

ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերը հանդերձանքի ձեռքբերման նպատակով 29.03.2017թ. հայտարարել է N ՀՀ ԿԱ ՈՀ ՇՀԱՊՁԲ-17/10/ԱԲ/1/ԻԾ ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

«Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն կազմակերպված ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել հայտ:

Ընկերության կողմից ներկայացրած հայտը հանձնաժողովի կողմից 18.04.2017թ. թիվ 4 արձանագրությամբ մերժվել է հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցելու հիմնավորմամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի բ. ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4)-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետև՝ Կարգ) 47-րդ կետի 1)-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն:

Կարգի 67-րդ կետի 1)-ին ենթակետի բ. պարերության համաձայն՝ Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝ հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Կարգի 70-րդ կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Կարգի 122.2-րդ կետի համաձայն՝ Եթե գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու գործընթացի շրջանակներում մասնակցի կողմից Գնումների բողոքարկման խորհուրդ է ներկայացվում բողոք, ապա գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու հիմքերի ուսումնասիրման գործընթացը կասեցվում է՝ մինչև Գնումների բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշման ընդունումը:

Խորհուրդն արձանագրում է, որ.

- ԳԲԽ-ԱՄ-2017/01 բողոքի քննության ընթացքում պարզվել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 27.04.2017թ. թիվ 1/6-1/14168-17 գրության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա (2016թ.) ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմել է 279 590 904 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 254 995 809 ՀՀ դրամ:
- Խորհուրդը ԳԲԽ-ԱՄ-2017/01 բողոքի քննության արդյունքում գտել է, որ «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի «ֆինանսական միջոցներ» չափանիշը բավարարել է

հրավերի պահանջներին և Ընկերության հայտը այդ հիմքով ենթակա չէ մերժման, իսկ ընկերության բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

• ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից ԳԲԽ-ԱՄ-2017/01 բողոքի քննության արդյունքում՝ «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի 02.05.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքը 16.05.2017թ. թիվ ԱՄ-2017/01 որոշմամբ բավարարվել է և դադարեցվել ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից կազմակերպված ՀՀ ԿԱ ՈՉ ՇՀԱՊՁԲ-17/10/ԱԲ/1/ԻԾ ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին մերժելու մասին որոշումը:

Այսպիսով, Խորհուրդը հիմք ընդունելով ԳԲԽ-ԱՄ-2017/01 բողոքում առկա ապացույցները, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը, ինչպես նաև 16.05.2017թ. թիվ ԱՄ-2017/01 որոշումը՝ գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 03.05.2017թ. թիվ 03/73-3/7693-17 գրությամբ ներկայացված հիմնավորումներով «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 03.05.2017թ. թիվ 03/73-3/7693-17 գրությամբ «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**